600.0221.19.06.19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

19 հունիսի 2019 թվականի №221Ա
ք.Երևան

«ՔԱՐԵ ՀՈՎԻՏ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ №0513 ԼԻՑԵՆԶԻԱՆ ՎԵՐԱԶԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2019 թվականի մարտի 27-ի №69Ա որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) «Քարե Հովիտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) «Շենիկ» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0513 լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը երկարաձգվել է, իսկ Որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետով Ընկերությունը պարտավորեցվել է Որոշումն ուժի մեջ մտնելուց հետո քառասունհինգօրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել 1 487 500 (մեկ միլիոն չորս հարյուր ութսունյոթ հազար հինգ հարյուր) դրամ գումարի երաշխիք՝ մինչև 2020 թվականի մարտի 30-ը գործողության ժամկետով, ինչը սահմանված ժամկետում չի ներկայացվել,

բ) Հանձնաժողովը 2019 թվականի մայիսի 30-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ Որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված մեկ միլիոն չորս հարյուր ութսունյոթ հազար հինգ հարյուր դրամի երաշխիքի ներկայացման ժամկետի խախտման փաստի ուսումնասիրության նպատակով, որի մասին Ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի 2019 թվականի մայիսի 30-ի №ԱԲ-1135ի գրությամբ,

գ) հարուցված վարչական վարույթն իրականացնելիս Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության պաշտոնական կայքում տեղակայված տեղեկատվության ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ 2018 թվականի

հուլիսի 10-ին տեղի է ունեցել Ընկերության գտնվելու վայրի փոփոխություն, մինչդեռ Ընկերությունը Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի (այսուհետ՝ Կարգ) սահմանված ընթացակարգով և ժամկետում չի դիմել Հանձնաժողով՝ էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0513 լիցենզիան վերաձևակերպելու համար, ինչի վերաբերյալ ևս Ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի 2019 թվականի հունիսի 12-ի №ՍՇ/2.3-71/1107-19 գրությամբ,

դ) Կարգի 90-րդ կետի համաձայն՝ լիցենզավորված անձի վերակազմակերպման կամ նրա անվանման, կամ գտնվելու վայրի փոփոխման դեպքում լիցենզավորված անձը պարտավոր է, այդ փոփոխություններն իրավական ուժ ստանալու օրվանից սկսած տասնհինգօրյա ժամկետում, լիցենզիայի վերաձևակերպման համար հայտ ներկայացնել Հանձնաժողով՝ կցելով տեղեկություններ պետական գրանցման համարի (պետական հաշվառման համարի) վերաբերյալ՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի,

ե) հարուցված վարչական վարույթի շրջանակում Ընկերությունը 2019 թվականի հունիսի 10-ի և 14-ի գրություններով ներկայացրել է պահանջվող երաշխիքը, դրա ներկայացման ժամկետի խախտումը պայմանավորել է բանկային ընթացակարգերով և որոշ տեխնիկական պատճառներով, իսկ Կարգի 90-րդ կետի խախտումը պայմանավորել է Կարգի չիմացությամբ, միաժամանակ խնդրելով Ընկերության գտնվելու վայրի փոփոխության հիմքով վերաձևակերպել էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0513 լիցենզիան,

զ) հարուցված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետի և Կարգի 90-րդ կետի պահանջները, քանի որ երաշխիքը և լիցենզիայի վերաձևակերպման հայտը ներկայացրել է համապատասխանաբար Որոշմամբ սահմանված քառասունհինգօրյա և Կարգի 90-րդ կետով սահմանված տասնհինգօրյա ժամկետների խախտմամբ, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին և 9-րդ մասերը և Կարգը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Կարգի 90-րդ կետի և Որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետի խախտման համար Ընկերությանը նախազգուշացնել:
2. Վերաձևակերպել Հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 2-ի «Քարե Հովիտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Շենիկ» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության

լիցենզիա տրամադրելու մասին» №337Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրված էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0513 լիցենզիան՝ լիցենզիայի պայմաններում «գտնվելու վայրը» տողը շարադրելով հետևյալ խմբագրությամբ.

«Հայաստանի Հանրապետություն, Կոտայքի մարզ, գյուղ Քասախ, Վազգեն Սարգսյան փ. 12/7 տ.»:

3. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից, բացառությամբ որոշման 2-րդ կետի, որն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հունիսի 20-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
19 հունիսի 2019թ.